ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Սուրեն Պապիկյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ռուսաստանի Դաշնություն (ք. Սոչի), 2019 թվականի մայիսի 30 - հունիսի 1

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ

Եվրասիական տնտեսական միության մասնակից-պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի 1-ին նիստին մասնակցություն

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2019թ. հունիսի 1-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության մասնակից-պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի 1-ին նիստը, որն անցկացվել է ԵԱՏՀ-ի էներգետիկայի և ենթակառուցվածքի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Էմիլ Կայկիևի ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի նախագահությամբ՝ հաշվի առնելով, որ ս.թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունը մեկ տարով ստանձնել է Եվրասիական տնտեսական միության նախագահությունը:

Վերոնշյալ նիստի ընթացքում Էմիլ Կայկիևի կողմից ներկայացվեցին նախօրեին փորձագիտական խմբի կողմից կատարած աշխատանքի արդյունքները հետևյալ կետերի վերաբերյալ.

- ԵԱՏՄ մասնակից-պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի գործունեության կազմակերպչական հարցերը,
- 2018–2020թթ. ժամանակահատվածում ԵԱՏՄ մասնակից-պետությունների համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականացման հարցերով միջոցառումների ծրագրի («ճանապարհային քարտեզներ») կատարման ընթացքը,
- 2018–2020թթ. ժամանակահատվածում օդային տրանսպորտի ոլորտում ԵԱՏՄ-ի մասնակից-պետությունների համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղությունների և փուլերի իրականացման հարցերով միջոցառումների ծրագրի («ճանապարհային քարտեզներ») կատարման առանձին փուլերի իրականացման ընթացքը,

- 2014թ. մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրում փոփոխությունների կատարման ընթացքը, մասնավորապես՝ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկման բնագավառում,
- մինչև 2025թ. ժամանակահատվածի համար ԵԱՏՄ-ի ինտեգրացիոն գործընթացների խորացման և Հիմնական ուղղությունների իրականացման հերթական ժամանակահատվածի համար տրանսպորտի ոլորտում ինտեգրման խորացման ուղղությունների սահմանումը:

ԵԱՏՀ էներգետիկայի և ենթակառուցվածքի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Էմիլ Կայկիևի կողմից ներկայացվեցին ԵԱՏՄ տրանսպորտի «ճանապարհային քարտեզների» իրականացման վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը, ինչպես նաև օդային տրանսպորտի մասով «ճանապարհային քարտեզի» առանձին կետերի կատարումն ավարտելու գործընթացի վերաբերյալ տվյալները:

ՌԴ տրանսպորտի նախարար Եվգենի Դիտրիխի կողմից ներկայացվեց տեղեկատվություն «Տրանսպորտային շաբաթ–2018» միջոցառման շրջանակներում 2018թ. նոյեմբերի 22-ին ք. Մոսկվայում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ստորագրված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության հարցերով միջազգային բյուրոյի մասին» համաձայնագրի վավերացման ընթացքի վերաբերյալ: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանն իր հերթին հայտնեց, որ 2019թ. մայիսի 21-ին հրապարակվել է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը համաձայնագրի վերաբերալ առ այն, որ փաստաթուղթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Ղազախստանի Հանրապետության արդյունաբերության և ենթակառուցվածքային զարգացման նախարար Իգոր Սկլյառը նշեց, որ իրենք պատրաստ են վերոնշյալ Համաձայնագրին միանալուն, և սպասում են վավերացման ընթացակարգերի ավարտին, ինչը նախատեսվում է մինչև 2019թ. տարվա վերջ: Բելառուսի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարար Ալեքսեյ Ավրամենկոն և Ղրղզստանի Հանրապետության տրանսպորտի և ճանապարհների նախարար Ժանատ Բեյշենովը հայտնեցին, որ իրենք դեռ պատրաստ չեն միանալուն, սակայն առայժմ կհետևեն ընթացքին՝ վերջնական որոշում կայացնելու նպատակով:

Է. Կայկիևը տեղեկացրեց նաև, որ «Նավագնացության մասին» համաձայնագիրը ներկա պահին անցնում է վավերացման համար ներպետական ընթացակարգեր, ու դրա փուլերի առաջընթացն այսուհետ վերահսկվելու է ենթակոմիտեի մակարդակով:

Մայիսի 31-ին կայացավ նախարարների ոչ պաշտոնական հանդիպումը, որի շրջանակներում Սուրեն Պապիկյանը երկկողմ հանդիպում ունեցավ Եվգենի Դիտրիխի հետ: Կողմերը քննարկեցին «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում հայտնաբերված չարաշահումների և իրականացված հետաքննության ընթացքը, ինչպես նաև հայկական կողմին ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացման թույլտվությունների տրամադրման հարցը: Խոսելով երկաթուղու ոլորտում ստեղծված իրավիճակի մասին՝ նախարարներն ընդգծեցին հարցի լուծման կարևորությունը երկու կողմերի համար՝ 2019թ. հունիսի 25–26-ը Երևանում կայանալիք «ՀԿԵ» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման ընթացքում առաջացած տարաձայնությունների լուծման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստի ընթացքում: Անդրադառնալով հայկական կողմին թույլտվությունների տրամադրման հարցին՝ Եվ. Դիտրիխը խոստացավ, որ առաջիկայում իրենց կողմից կտրամադրվեն ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների համար 150 թույլտվություն և բեռնափոխադրումների 800 թույլտվություն:

Նույն օրը տեղի ունեցավ նաև փորձագիտական խմբի նիստը, որի ընթացքում հայկական պատվիրակության կողմից քննարկվեց Ռուսաստանի Դաշնության օդանավակայաններում ռուսական և հայկական ավիաընկերությունների սպասարկման անհավասար պայմանների հարցը:

Հայկական և ռուսական ավիափոխադրումների շուկայում սահմանված են անհավասար պայմաններ երկու երկրների փոխադրողների համար. Ռուսաստանի օդանավակայաններում ռուսական ավիափոխադրողների սպասարկման սակագները նշանակալի ցածր են, քան այդ օդանավակայանների սակագներն արտերկրյա ավիափոխադրողների համար, ինչը հակասում է միջազգային փորձին ու Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) պահանջներին և ստեղծում է անհավասար պայմաններ շուկայական մրցակցության համար: Մինչդեռ Հայաստանի օդանավակայաններում սահմանված են հավասար պայմաններ բոլոր ավիաուղիների գործունեության համար՝ ինչպես արտերկրյա, այնպես էլ տեղական: Ռուսական ավիացիոն իշխանությունների առաջարկությամբ տվյալ հարցը նախատեսվում է քննարկել 2025թ. ԵԱՏՄ շրջանակներում:

Բարձրացնելով վերոնշյալ հարցը՝ հայկական կողմն առաջարկեց չհետաձգել գործընթացը մինչև 2025թ. և տվյալ հարցի վերջնական լուծման նպատակով ստեղծել Ռուսաստանի օդանավակայաններում նմանատիպ բարենպաստ պայմաններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԵԱՏՄ մասնակից-պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի կողմից որոշվեց շարունակել միջոցառումների ծրագրի («ճանապարհային քարտեզների») իրականացման ընթացքը՝ նիստի Արձանագրության 1-ին կետում նշված ժամկետներին համաձայն, ինչպես նաև քննարկել դրանց արդյունքները ղեկավարների խորհդի հերթական նիստին:

Հայկական կողմի բարձրացրած ՌԴ օդանավակայաններում ռուսական և հայկական ավիաընկերությունների սպասարկման անհավասար պայմանների հարցը որոշվեց դիտարկել և կարգավորել հայ-ռուսական երկկողմ համագործակցության շրջանակներում:

Որոշում կայացվեց ԵԱՏՄ մասնակից-պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի հաջորդ նիստն անցկացնել մինչև 2019թ. սեպտեմբերի 20-ը Հայաստանի Հանրապետությունում՝ հաշվի առնելով, որ Հայաստանը մեկ տարի ժամկետով ԵԱՏՄ-ում հանդիսանում է նախագահող երկիր, իսկ ԵԱՏՀ կանոնադրությամբ նախագահող երկրում տվյալ տարում պարտադիր պետք է անցկացվի յուրաքանչյուր ղեկավար-խմբի նիստը:

ՌԴ տրանսպորտի նախարար Եվ. Դիտրիխի կողմից հայտարարվեց, որ այս տարի «Տրանսպորտային շաբաթ-2019» ամենամյա միջոցարումը տեղի է ունենալու նոյեմբերի 17-20-ը Մոսկվայում:

ՀՀ տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարար **Սուրեն ՊԱՊԻԿՅԱՆ**

05.06.2019թ.